## Ուսումնական նախագծի պլան

**Դասարան՝ 7Ա**

**Ղեկավար՝ Լուիզա Աղաքարյան Վ. Սարգսյան**

**Առարկա ՝ Քիմիա և աշխարհագրություն**

| | | | |
|---|---|---|---|
| **Նախագծի սկիզբ** | 1. | **Նախագծի անունը (անվանումը ՀՀ օգտակար հանածոների քարտեզագրում և տնտեսական նշանակությունը** | |
| | 2. | **Հիմնահարցը (հիմնախնդիրը)** Ո՞ր ոչ մետաղական օգտակար հանածոներն են առավել տարածված Հայաստանում և հատկապես Կոտայքի մարզում:<br>- Յուրաքանչյուր հանածոյի քիմիական կազմը և ֆիզիկական հատկությունը:<br>- Որտե՞ղ են գտնվում տվյալ հանածոների հանքավայրերը, և ինչպե՞ս են դրանք քարտեզագրվում:<br>- Ի՞նչ արդյունաբերական և տնտեսական նշանակություն ունի յուրաքանչյուր հանածո:<br>- Ինչպե՞ս են օգտագործվում այդ հանածոները շինարարության, գյուղատնտեսության կամ արտահանման ոլորտներում: | |
| | 3. | **Ուսումնական տարին, կիսամյակը** | **2024_2025** |
| | 4. | **Տևողությունը** | **6 շաբաթ** |
| | 5. | **Ժամաքանակը** | **6** |
| | 6. | **Նպատակը (ները)** | Մեր նպատակն էր<br>Ուսումնասիրել Հայաստանում՝ մասնավորապես Կոտայքի մարզում տարածված ոչ մետաղական օգտակար հանածոները (օբսիդիան, տուֆ, բազալտ, պեմզա, գրանիտ, կրաքար), պարզել դրանց քիմիական կազմը, տարածվածությունը և տնտեսական նշանակությունը, քարտեզագրել հիմնական հանքավայրերը, գնահատել կիրառության ոլորտներն ու բնապահպանական հետևանքները՝ ձևավորելով պատասխանատու վերաբերմունք բնական ռեսուրսների նկատմամբ: |

| | | |
|---|---|---|
| | | |
| 7. | **Ուղղորդող հարցեր** | Ո՞ր են Հայաստանում տարածված ոչ մետաղական օգտակար հանածոները։<br><br>Ի՞նչ է յուրաքանչյուր հանածոյի քիմիական կազմն ու ֆիզիկական հատկությունները։<br><br>Որտե՞ղ են գտնվում տվյալ հանածոների հիմնական հանքավայրերը Հայաստանում։<br><br>Ինչպե՞ս են այդ հանածոները արդյունահանվում և վերամշակվում։<br><br>Ի՞նչ կիրառություն ունեն այս նյութերը Հայաստանի տնտեսության մեջ (շինարարություն, արդյունաբերություն և այլն)։<br><br>Որո՞նք են տվյալ հանածոների տնտեսական և արտահանման հնարավորությունները։<br><br>Ի՞նչ բնապահպանական ազդեցություն կարող է ունենալ դրանց շահագործումը։<br><br>Ինչպե՞ս կարելի է ապահովել հանքային ռեսուրսների կայուն և պատասխանատու օգտագործում։<br><br>Ինչ կապ ունի այս թեման քիմիայի, աշխարհագրության և տնտեսագիտության հետ։<br><br>Ի՞նչ եզրակացություններ կարող ենք անել՝ ուսումնասիրելով այս օգտակար հանածոները։ |
| 8. | **Ուսումնական նախագծի վերջնարդյունքները** | **Քարտեզ ,սահիկաշար և մակետ** |
| 9. | **Աշխատանքային խմբեր** | **Երկրաբանական խումբ** |
| | | **Քիմիական խումբ** |
| | | **Տնտեսագիտական խումբ** |
| | | **Ներկայացման խումբ** |
| | | |

<table>
<tr>
<td rowspan="4">Ն<br>ա<br>խ<br>ա<br>գ<br>ծ<br>ի<br>ը<br>ն<br>թ<br>ա<br>ց<br>ք</td>
<td rowspan="4">10.</td>
<td rowspan="4">Առաջադրանքներն ըստ խմբերի</td>
<td>Երկրաբանական խումբ:<br><br>🎬 Հավաքել տեղեկություն՝ որտեղ են Հայաստանում հանդիպում օբսիդիան, տուֆը, բազալտը, պեմզան, գրանիտը և կրաքարը:<br><br>🎬 Նշել այդ հանքավայրերը Հայաստանի քարտեզի վրա:<br><br>🎬 Նկարագրել բնական առաջացման պայմանները (օրինակ՝ հրաբխային ծագում</td>
</tr>
<tr>
<td>Քիմիական խումբ<br><br>🎬 Բացահայտել յուրաքանչյուր նյութի քիմիական կազմը:<br><br>🎬 Ներկայացնել դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունները (գույն, կարծրություն, լուծելիություն, խտություն և այլն):<br><br>🎬 Մատուցել հնարավոր քիմիական ռեակցիաներ, եթե կիրառելի է:</td>
</tr>
<tr>
<td>Տնտեսագիտական խումբ<br><br>🎬 Ներկայացնել, թե որտեղ և ինչպես են օգտագործվում տվյալ հանածոները (շինարարություն, ճարտարապետություն, ճանապարհաշինություն և այլն):<br><br>🎬 Նշել արտահանման հնարավորությունները և տնտեսական նպաստը Հայաստանի համար:<br><br>🎬 Համեմատել տարբեր նյութերի պահանջարկն ու արժեքը:</td>
</tr>
<tr>
<td>Ներկայացման խումբ<br><br>Առաջադրանքներ՝<br><br>● Ստեղծել սլայդներ, պաստառ կամ տեսաշար՝ ըստ խմբերի նյութերի:<br>● Կազմել բանավոր զեկույցի կառուցվածք:<br>● Համակարգել քարտեզը, գծապատկերները, աղյուսակները և ներկայացման ընթացքը:</td>
</tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | **1.** | | | |
| | **11**. | **Ժամանակացույց** | | ▪ *01.04.2025* |
| | | | | ▪ *08.04.2025* |
| | | | | ▪ *15.04.2025* |
| | | | | ▪ *22.04.2025* |
| | **7.** | | | ▪ *29.04.2025* |
| | **8.** | | | ▪ *06.05.2025* |
| **Նախագծիավարտ** | **12**. | **Ուսումնական նախագծի նկարագիրը** | Նյութերի հավաքագրում,ուսումնասիրություն,մշակում,այցելություն արտադրամասերև քարտեզի և մակետի ստեղծում և ներկայացում*:* | |
| | | | | |
| | **13**. | Ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի /պրոդուկտի/ ներկայացման տեսակը և հետազոտության աղբյուրները: | Տեսանյութի,սահիկաշարի ,մակետի և քարտեզի ստեղծում*:* | |
| | **14**. | Գնահատում | *1.* Նախագծին մասնակցություն *(4* միավոր*)*<br>*2.* Ներկայացման հմտություններ *(2* միավոր*)*<br>*3.* Գիտելիքների ստուգում *(4* միավոր*)*: | |

| | | | |
|---|---|---|---|
| | **15**. | Տվյալ առակայի/ների/ թեմայից /ներից/  ձեռք բերված վերջնարդյունքներ | 1. Գրավոր վերլուծական զեկույց՝ հանքանյութերի հատկություններով, տարածվածությամբ ու կիրառություններով։<br>2. Թեմատիկ քարտեզ՝ Հայաստանի տարածքում օգտակար հանածոների հանքավայրերի ցուցադրմամբ։<br>3. Սլայդային կամ պաստառային ներկայացում, որով ամփոփվել է ուսումնասիրված նյութը։<br>4. Խմբային համագործակցության փորձ և սեփական ներդրման գիտակցում։<br>5. Տնտեսության և բնապահպանության միջև կապի ընկալում՝ բնական ռեսուրսների շահագործման համատեքստում։ |